ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի կարիքների համար «ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի» ներդրման ծրագրով նախատեսված օժանդակ տեխնիկական միջոցների ձեռքբերման «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» սեպտեմբերի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Գրիգորյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի պետ

հանձնաժողովի անդամներ՝

Սամվել Հարությունյան՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ

Կոնստանտին Կուրբանյան՝ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի խորհրդական

Վահե Սարգսյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության իրավաբանական վարչության պետ

Լուսինե Հակոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության կապի բաժնի ավագ մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 23 սեպտեմբերի ժամը 15:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 26.09.2022 թ., ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ.

Գնման հայտով սահմանվել է՝ անխափան սնուցման սարքեր-1 000 000 ՀՀ դրամ, դիզելային գեներատոր-3 300 000 ՀՀ դրամ, արկղեր-1 160 000 ՀՀ դրամ

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Անխափան սնուցման սարքեր

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն

1	***ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ***	Ք. Երևան, Ավան 7-րդ փողոց2 նրբանցք 29/1շենք

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2022/11» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Անխափան սնուցման սարքեր

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
	ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ	1000000000	0%	1000000000	1000000	0%	1000000	

Դիզելային գեներատոր

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
	ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ	1000000000	0%	1000000000	3300000	0%	3300000	

Արկղեր

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
	ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ	1000000000	0%	1000000000	1160000	0%	1160000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 26.09.2022 թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչվել ***ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ*** -ն

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2 կամ 1.3/ առկայության մասին.

ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ -ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերից միայն **դիմում-հայտարարություն Հավելված 1-ը: Բացակայում է իրական**

շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2 կամ Հավելված 1.3 և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 ***ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ***-ի կողմից ներկայացված հայտում առկա **դիմում-հայտարարություն Հավելված 1-ը** կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան՝ բացակայում է մասնակցի էլեկտրոնային ստորագրությունը և ղեկավարի պաշտոնը,անուն ազգանունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց՝

- մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել ***ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ***-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը /սեպտեմբերի 28-ը ժամը 18:00/ շտկել հայտում առկա անհամապատասխանությունները /**բացակայում է մասնակցի էլեկտրոնային ստորագրությունը և ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը, իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2 կամ Հավելված 1.3 և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:**

- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ. սեպտեմբերի 29-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Համակարգի միջոցով ծանուցել ***ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ***-ին՝ առաջարկելով մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ **Կարեն Գրիգորյան**

Անդամներ՝

_____ **Սամվել Հարությունյան**

_____ **Կոնստանտին Կուրբանյան**

_____ **Վահե Սարգսյան**

_____ **Լուսինե Հակոբյան**

Քարտուղար՝

_____ **Դիանա Գրիգորյան**